

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների, 2000թ. փետրվարի վերջի դրությամբ դրամական զանգվածը կազմել է 105980¹ մլն. դրամ և 1999թ. փետրվարի վերջի նկատմամբ աճել 11080 մլն. դրամով կամ 11,7 %-ով, 1999թ. դեկտեմբերի վերջի համեմատ նվազել՝ 5089 մլն. դրամով կամ 4,6 %-ով, իսկ 2000թ. հունվարի վերջի համեմատ աճել է 2055 մլն. դրամով կամ 2,0 %-ով: Ընդ որում, 2000թ. հունվարի վերջի համեմատ դրամական զանգվածի նշված փոփոխությունը պայմանավորված է և՛ զուտ արտաքին ակտիվների, և՛ զուտ ներքին ակտիվների ավելացումով համապատասխանաբար՝ 372 մլն. և 1683 մլն. դրամով:

Դրամական զանգվածն առանց կուտակված տոկոսների և ծրագրերի իրագործման գրասենյակների (ԾԻԳ-երի) միջոցների 2000թ. փետրվարին աճել է 2190 մլն. դրամով կամ 2,1 %-ով և ամսվա վերջի դրությամբ կազմել՝ 104150 մլն. դրամ:

Դրամական զանգվածի կառուցվածքում 2000թ. փետրվար ամսում աճ է գրանցվել ժամկետային, խնայողական և արտարժույթով դեպոզիտների գծով 3801 մլն. դրամ կամ 6,6 %: Նույն ժամանակահատվածում բանկային համակարգից դուրս կանխիկ դրամը նվազել է 64 մլն. դրամով կամ 0,2%-ով, իսկ ցպահանջ դեպոզիտները՝ 1681 մլն. դրամով կամ 14,5%-ով:

ՀՀ ազգային արժույթով դրամական զանգվածը կազմել է 49752 մլն. դրամ, իսկ բանկերի կողմից ներգրավված արտարժույթով դեպոզիտները՝ 56228 մլն. դրամ, ընդ որում, արտարժույթով դեպոզիտները հունվարի վերջի նկատմամբ աճել են 3161 մլն. դրամով կամ 6,0 %-ով և կազմել են դրամական զանգվածի 53,1 %-ը: Արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը դրամական զանգվածում հունվարի վերջի համեմատ աճել է 2,0 տոկոսային կետով:

Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամական զանգվածում կազմել է 32,8 % և հունվարի վերջի համեմատ՝ նվազել 0,7 տոկոսային կետով:

Դրամական բազան փետրվարի վերջի դրությամբ կազմել է 49015 մլն. դրամ, այդ թվում ԾԻԳ-երի միջոցները՝ 866 մլն. դրամ: 2000թ. փետրվար ամսում դրամական բազան նվազել է 302 մլն. դրամով կամ 0,6 %-ով:

Դրամական զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը փետրվարին հավասարվել է 2,16-ի:

ՀՀ բանկային համակարգի կողմից ներքին տնտեսության նկատմամբ պահանջները (դրամով և արտարժույթով) 2000թ. մարտի 1-ի դրությամբ կազմել են 94537² մլն. դրամ և փետրվարի 1-ի համեմատ աճել են 3161 մլն. դրամով կամ 3,5 %-ով:

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը³ 2000թ. փետրվարին կազմել է 21 %, ինչը նախորդ ամսվա համեմատ նվազել է 18 տոկոսային կետով:

Առևտրային բանկերի վարկային ներդրումները (դրամով և տարադրամով) 2000թ. մարտի 1-ի դրությամբ կազմել են 83795¹ մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել՝ 9398 մլն. դրամով կամ 12,6 %-ով, իսկ փետրվարի 1-ի նկատմամբ աճել են համապատասխանաբար՝ 3970 մլն դրամով կամ 5,0%-ով :

¹ Ընդգրկված են նաև դրամական զանգվածի՝ դեպոզիտների գծով հաշվարկված տոկոսները և Կենտրոնական բանկի այլ հաշիվները

² Ընդգրկված են հաշվարկված տոկոսները

³ ՀՀ ԿԲ կողմից նախկինում սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոխարեն ներկայումս սահմանվում են ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներ, որոնցից ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքն իր բնույթով համապատասխանում է նախկին վերաֆինանսավորման տոկոսադրույքին:

2000թ. մարտի 1-ի դրությամբ արտարժույթով տրամադրվել է 70583 մլն. դրամի վարկ, որը կազմել է ընդամենը վարկային ներդրումների 84,2 %-ը: Արտարժույթով վարկավորման ծավալները տարեսկզբի նկատմամբ աճել են 9953 մլն. դրամով կամ 16,4 %-ով, իսկ փետրվարի 1-ի նկատմամբ՝ համապատասխանաբար 4396 մլն դրամով կամ 6,6 %-ով:

Վարկային ներդրումների ընդհանուր ծավալում կարճաժամկետ² վարկերի տեսակարար կշիռը կազմել է 45,9 %, երկարաժամկետինը՝ 54,1 %:

2000թ. մարտի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 9416 մլն. և 8146 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ երկարաձգված վարկերն աճել են՝ 865 մլն. դրամով, իսկ ժամկետանց վարկերը նվազել՝ 1784 մլն. դրամով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը աճել են համապատասխանաբար՝ 165 մլն և 1418 մլն. դրամով :

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 3653 մլն. դրամով կամ 11,9 %-ով և 2000թ. մարտի 1-ի դրությամբ կազմել՝ 34338 մլն. դրամ, իսկ փետրվարի 1-ի նկատմամբ աճել է՝ 2024 մլն. դրամով կամ 6,3 %-ով :

2000թ. հունվար-փետրվարին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 56224,6 մլն. դրամ (փետրվարին՝ 30892,8 մլն. դրամ), , իսկ ծախսերը՝ 49386,7 մլն. դրամ (փետրվարին՝ 22499,6 մլն. դրամ): Մուտքերը գերազանցել են ծախսերի գումարը 6857,9 մլն. դրամով (փետրվարին՝ 8393,2 մլն. դրամով): Նույն ժամանակահատվածում արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 16812,0 մլն. դրամ (փետրվարին՝ 8103,2 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 15738,2 մլն. դրամ (փետրվարին՝ 8409,7 մլն. դրամ): Հունվար-փետրվարին արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 1073,8 մլն. դրամով, իսկ փետրվարին արտարժույթ գնելու համար ծախսերը գերազանցել են արտարժույթի վաճառքից մուտքերի գումարը 306,5 մլն. դրամով:

¹ ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը

² ընդգրկված են մինչև 360 օր մարման ժամկետ ունեցող վարկերը